



ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՑԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

3. ԵՐԵՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

իմ առանձին ուշադրությունն են գրավել երևանի հայոց եկեղեցիները: Ես ամեն օր տեսնում եմ իմ լուսամուտից նրանց բարձր զմբեթներն իրենց քառաթիկ խաչերով:

Հստ Թորոս քահանա Մաճառյանի, որը պաշտոնավարում է Կոնդի սարահարթի վրա կառուցված Ս. Հովհաննես եկեղեցում, հանապագորյա ժամերգովովյունները երևանի Կեղեցիներում տեղի են ունենում ճշտապահութեան և քրիստոնյա տղամարդիկ ու կանայք ազատորեն կատարում են իրենց հավատի պաշտամունքը:

Սովորական Միությունում 1917 թվականի դեկտեմբերի 19-ի և 20-ի (հին տոմարով) հրամանագրերով սահմանվել է քաղաքացիական ամուսնություն, իսկ 1918 թվականի հունվարի 21-ի (հին տոմարով) փետրվարի 3-ի հրամանագրով, եկեղեցին բաժնվել է պետությունից և դպրոցը՝ Կեղեցցուց: Կրոնը և եկեղեցին հայտարարվել են քաղաքացիների մասնավոր գործը:

Այդ հրամանագրերի հիման վրա, ուրեմն, պարտադիր է քաղաքացիական ամուսնությունը և նորածինների արձանագրումը՝ պետական հատուկ տոմարի մեջ: Եթե ամուսնացողների ու նորածինների ծնողները ցանկանան, ազատ են կրոնական համապատասխան ծիսակատարությամբ լրավարարել իրենց այդ ցանկությունը:

Ես, ժամանակ առ ժամանակ, բազմա-

մարդ պողոտաների վրա շրջելիս կամ տրամփայի մեջ ճանապարհորդելիս, հաճախակի հանդիպում եմ քահանաների, որոնց մեջ՝ արտասահմանից ներգաղթած թորոս քահանա Մաճառյանին, Վարդան քահանա Վարդերեսյանին, Զալեպի Գուրգեն քահանա Հաճեթյանին (միջանկյալ նշեմ, որ բողոքականներն էլ ունեն իրենց ժողովատունը) և ուրիշներին, որոնց արտաքին կերպարանքը՝ մորուառվ ու սփեռով, իր ամենափոքր մանրամասնությանը մեջ նույն է, ինչ որ էր արտասահմանում: Նրանց ֆիզիկապես ավելի առողջ են ու ավելի կայտառ, քան էին արտասահմանում (հայրենագարձ Գրիգոր քահանա Տեր-Գեորգյանը վախճանվել է, Սանջաբում և Բեյրութում իր արդեն իսկ ունեցած ստամբուրի հիվանդությունից):

Ենելով այս բացահայտ իրողություններից, ես ծիծաղում եմ կաթոլիկ Վատիկանի կամակատար, սևասիրու Շռովուր տերը Աղաջանյանին, որը Բեյրութում, Աշրաֆիեի իր ապարանքում, «Շռվական թղթեր» է մրուտում, հավատացնելու միամիտներին, որ իրը «Հայատանում կրոնն ու կրոնականները հալածվում են», ժողովրդից թաքցնելով այն իրողությունը, որ սովորական երկրում միանգամայն ազատ է խոճի ազատությունը և լուրաքանչյուր ոք կարող է ազատ պաշտել այս կամ այն կրոնը:

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովորական մարդկանց հատուկ պարտականության գիտակից լրջությունն ու հոգեկան վեհությունն են մոտից նկատեցի նաև

1. Շարունակված ամսագրի 1952 թվականի հունիսի համարից:

ժողովրդական դատավորների ընտրության ժամանակ:

Ընտրությունների որոշյալ օրը, վաղ առավոտյան, մայրաքաղաքի և արական և իշեական սեոփին պատկանող ողջ ընտրողներն

եռուզենի մեջ էին: Յուրաքանչյուր ընտրողի դեմքի վրա նկատվում էր հպարտություն, որը ծնվում է քաղաքացիական դերազանց պարտականությունը կատարելու գիտակցությունից:

Ժողովուրդն ինքն էր ընտրում իր դատավորներին:

Անքննադատելի կարգ ու կանոն էր տիրում ընտրական գրասենյակներում, յուրաքանչյուր ընտրող տալիս էր իր ազատ և անկաշկանդ ձայնը՝ իր հարմար դատած ժողովը դատական թեկնածուներին:

Ի տես սովետական ընտրողների պարտականության գիտակից լրջության և հոգիկան վեճության, երջանիկ էի զգում նև ինձ, որ ազատվել էի արտասահմանում կատարված այսպիս կողման «ընտրական պայքարանների խաղբություններից»:

Այսաեղ, արտասահմանում, օրինակ Թյուրքիայում, Սիրիայում կամ Լիբանանում, ժողովուրդի և աշխատավորների պաշտպան

մարդկանց փոխարեն մեծ մասամբ ընտրովում են այնպիսի մարդիկ, որոնց հասարակ ժողովուրդը չի ցանկանում քվե տալ, ուստի և գործի են լծվում դրամը, սուս խոստուները, սպառնալիքը, ոճիրը, ի վերջո... զինյալ սատիկանությունը՝ ժանտարմերիան: Եվ հաճախ անմեղ ժողովուրդի արյունը հոսում է ընտրական գրասենյակների առջև: Արա հետեւանքը լինում է այն, որ ընտրելու իրավունքը ունեցող քաղաքացիների 80 տոկոսը հոսու է մնում կամ ձեւականորեն մասնակցում ընտրություններին:

Միշանկյալ նշեմ, որ արտասահմանում գասավորները նշանակվում են իշխանության կողմից և ո՞չ թե ընտրվում ուղղակի ժողովուրդի ձայնով: Եվ այդ է պատճառը, որ ժողովուրդը չի հարգում և չի սիրում նրանց: Իսկ արտասահմանի կանայք ընդհանրապես զրկված են ամեն տեսակ ընտրությունների մասնակցելու իրավունքից:

5. ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԵՐԳԸ

Զի կարելի չհիանալ շինարարական աշխատանքների հզոր թափի վրա, որն ի դործ են դում մայրաքաղաքի աշխատավորները, անթերի գլուխ հանելու համար վերջերս Աշխատավորների դեպուտատների նրեանի քաղաքային Սովետի կողմից քննարկված և հաստաված երեանի վերակառուցման և զարգացման 15-ամյա պլանը:

Այսաեղ վարպետ քարտաշների մուրճերի զարկերի տակ բնության գեղեցկությունները՝ ծաղկները, պտուղները, թռչունները, եղնիկը զարդաքանդակների և խոյակների են վերածվում հանքից պոկված բազմագույն և բազմաձև տուփ քարերի վրա: Ամենուրեք բազմահարկ նորակառուցւների ամուր պատերը հեքիաթային աճով են բարձրանում վարպետ որմնադիրների ձեռքերի տակ, որովհետև մեքենան վերելակի միջոցով արագորեն բարձրացնում է հարկավոր նորութերը՝ քարը, շաղախը, երկաթը, ատաղձը և այլն: Վեհիսարի էքսկավատորը (հողափոր մեքենան), տասնյակ վիճերի ուժից ավելի գորավոր իր կնճիթովը, համարյա մի ակնֆարթում քանդում է հնամենի շենքերի պատերը և տեղ պատրաստում նոր կառուցվելիք մի կոթողական հիմնարկի:

Վերանորոգվում, ծառապատվում, էլեկտրական լամպեր կրազ սյուներով են զարդարվում պողոտաներն ու փողոցները, որոնց վրա ամեն տեղ որպես առողջապահության նախապայման տիրապետում է մաքրությունը:

Օրեցօր գեղեցկանում են գրոսայգիները,

որուել դրասնում են մանկապարտեզների առույգ երեխաներն իրենց ուսուցչուհիների մայրական հոգածության և հսկողության ներքո, մինչ ծերունի պապիկներ ու մամիկներ հանգստանում են սաղարթախիս ծառերի հովասուն ստվերների տակ, ափսոսալով անշուշտ իրենց կյանքի մնացած տարկների կարծությանը: Ինչե՞ր չպիտի տային նրանք այն դիտնական բժշկին, որը պիտի հաջողվեր գտնել կյանքի երկարացման շիճուկը...

Սակայն, այդ բոլոր գրոսայգիների գլխին կանգնելու է Միծեռնակաբերդի 30 հեկտար տարածություն բանող կուլտուրայի և հանգստի այգին, որն ունենալու է սեփական ֆիզկուլտուրայի (մարմնակրթանքի) ինստիտուտ, հանրակացարան, գրադարան, ստադիոն, լողարան, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի և թենիսի դաշտեր:

Մրանից ոչ շատ հեռու ժամանակամիջուցում, նախքան մագլցիչ մեքենաների (էսկալատորների) կառուցումը, մի պատկառազդու կամուրջ արդին անհետացնում է Միծեռնակաբերդի դժվարամատչելիությունը:

Ահա այսպես, երեանի յուրաքանչյուր թաղամասում, յուրաքանչյուր անկյունում, փորող և ծանրություն բարձրացնող մեքենաներից, քարտաշների մուրճերից, ճարտարագործ որմնադիրների ձեռքերից և ժիր ու հաստատակամ աշխատավորների շրթներից բարձրացող ստեղծագործ աշխատանքի բաղրացությունը համերդն է սալաւենում մինուրտի մեջ:

Յ. ԵՐԵՎԱՆԸ ՄԻ ՀՍԿԱ ՌԽՍՈՒՄՆԱՐԱՆ Է

Ես այցելել եմ Պետական մատենադարարանի, Թանգարանի, Համալսարանի և Ակադեմիայի հոյակապ շենքերը և սբանչացել հայտավորականների և գիտնականների կատարած գնահատելի աշխատանքի վրա, ուրով լուս աշխարհ են բերլում անցյալ ժամանակաշրջանների թաքոն մնացած արժեքները և լուծվում բնության ծոցում մինչև այժմ անլուծելի նկատված գիտական հար-

գաճիճում ունկնդրել եմ աստղաբաշխական մի շատ հետաքրքիր զասախոսություն և հմայվել եմ այն մեթոդից, որով դասախոսը բացատրում է և հատուկ մոլորակացուցյալորդիքով ցուցադրում՝ Արեք, Լուսինը, Երկիրը, մոլորակները, աստղերը, Միք կաթինը, նրանց փոխարարերություններն ու շարժումները, վերջալույսն ու արշալույսը:

Իմ հիացմունքը նվազ չի եղել Երևանի պողոտաների և փողոցների վրա շրջելու,



ՄԻ ԹԵՍԱՐԱՆ ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻՑ

Ես ներկա եմ եղել Արեգակնալի Սպենդիարյանի անվան լենինի շքանշանակիր օպերայի և բալետի Պետական թատրոնի և Գարբիել Սունդուկյանի անվան դրամատիկականի թատրոնի ներկայացումներին և հիացել արտիստների ցուցաբերած արվեստի կատարելության վրա:

Ես մասնակցել եմ Համաշխարհային փառական պաշտպանության ի նպաստ կազմակերպված բանվորական միտինգներին և զմայլվել աշխատավորներով, որոնք երդում էին անդուր աշխատանքով էլ ավելի ամրապնդել խաղաղության գործը:

Գիտա-լուսավորական թանգարանի մի

տեսնելով երկանո երեխաներին, պատանիներին ու երիասարդներին, որոնք զվարթագեմ դպրոց են զնում կամ դպրոցից վերադառնում:

Բացի բազմահազար ուսանողներից, աշխատանքի վայրը փութացող աշխատավորներն ու շուկայում վաճառուրդներն ու գնորդներն անդամ, ընթերցումով զարդանալու համար, գրքեր ու թերթեր ունեն իրենց ձեռքբերում:

Այս բոլոր գեղեցիկ իրադարյաններին ի տես, ի՞նչպես շնորհածարվել Սիրիայի և Լիբանանի աշխատավորների այն բազմաթիվ մանուկներին, պատանիներին և երիտա-

ուարդներին, որոնց կլանքը լրիվ անցնում է բեռնակրությամբ ու ծառայությամբ, առանց ճաշակելու ուսման ու գիտության բարիքներու

Անկասկած, երեանը մի հոկա ուսումնաւրան է:

Եղ ամեն անգամ երբ շրջում եմ պողո-

տաների վրա և տեսնում երիտասարդ տղաներից և աղջիկներից բաղկացած ուսանողական խմբերի ինքնավասար բայլվածքը, փառք եմ տալիս Հոկտեմբերյան Մեծ ուսուցիչային և մրմնչում ինք ինձ.

— Հազար երեսկան հոկտեմբերյան նոր սերնդին:

7. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԱՆՑ ԱՐԴՈՒԶԱՐԴԸ

Երեանի պողոտաների վրա, շուկաներում, զբոսայգիներում, թաղամասերում ման գաղիս, շեմ կարող զսպել իմ ծիծաղը արտասահմանյան այն անսկզբունք և անտոհմ արգահատելիների մասին, որոնք ամերիկյան դոլարի և անգիտական ստերլինգի սիրուցն, կորցրած խիզը ու բանականություն, զրաբարտում են սովետական կենցաղը, աշխատում են վարկաբեկել Սովետական Միությունն ու Սովետական Հայաստանը:

Նրանց՝ արտասահմանյան զրաբարտիչների ասելով, ինչպես առհասարակ ամրող Սովետական Միությունում, նույնպես և մասնավորաբար Սովետական Հայաստանում, իրք թե կանայք և աղջիկներ ընդմիշտ զբուժել են ամեն տեսակ նորածե արդուզարդից:

Ճշմարտությունը, սակայն, բացարձակապես դրա հակառակն է ապացուցում:

Ստալինյան, Լենինի, Աբրովյան, Նալբանդյան, Թաղրամյան և մյուս բոլոր պողոտաների վրա ման եկող ամենապճնասեր օտարականն անգամ ստիպված է խոստովանել, որ հայ կանայք ու աղջիկներն ավելի նորածե ու բարեձե են զուգվում, ավելի կոկիկ և գեղեցիկ են հագնվում, քան, օրինակ, Թեյրութի, Հալեպի ու Դամասկոսի «եվրոպականացած» կանայք ու աղջիկները:

Ստալինյան գլխավոր պողոտայի վրա կան «կանանց սալոններ, որտեղ մասնագետ կին վարսավիրաններ ամենավերջին նորաձեռներությամբ հարդարում են ու գանգրում կանանց և աղջկանց վարսերը, մանիկյուրում եղունգները, այնպես որ արտասահմանյան ամենանրածաշակ և դժվարահաճ պշրուհի-

ներն անգամ սիրով պիտի ուզենային մըշտական հաճախորդները դառնալ մեր «կանանց սալոններին: Մի տարբերությամբ, սակայն:

Մինչդեռ արտասահմանյան կանանցից ու աղջկանցից ոմանք, տղամարդկանց նմանվելու և հավասարվելու ունալինամությամբ, ուր յա կարսոն» (տղամարդկանց ձևով) խորզել են տալիս իրենց մազերը, այստեղ, սովետական աշխարհում, նրկայն մազերը պատիվ են համարվում. ինարտյաշ, սև, դեղնավում մազեր, որոնք իրապաներով հեղեղվում, գանգուլվում, հյուսվում ու հանգուցվում են զվաների վրա:

Բայց կարի գործարաններից, դուք կհանդիպեք նորաձեռության արհեստանոցների և ատելի մոդեռի, որոնք արանց և կանանց համար, տարվա շորս եղանակների հարմար հագուստներ են կարում բամբակեղեն, բըրդեղին ամեն տեսակ կերպասներով: Սակայն, այն տարբերությամբ դարձյալ, որ դուք, որևէ ժամանակ և ո՞չ մի տեղ չեք կարող հանդիպել այնպիսի կանանց և տղամարդկանց, որոնք, արտասահմանյան երկրներում, հանուն նորաձեռության, հավերժացնում են անպարփեշտությունը, իրենց դայթակեցուցիչ արտաքինով, այլանդակ հագուստ-կապուստով: Այդ անպարփեշտ զվաստական պատճենները շեն մզկել, ի՞նչ բարոզներ շեն խոսվել և ի՞նչ կոնդակներ շեն կարգացվել եկեղեցիների և մզկիթների բեմերից Միջին-Արևելյան երկրների քրիստոնյա և իսլամ կրոնավորների պողմից, բայց այդ բոլորը ապարդյուն են անցել:

8. ՈՍԿԵՂԵՆ, ԱՐԾԱԹԵՂԵՆ ԵՎ ԱԴԱՄԱՆԴԵՂԵՆ ԶԱՐԵԲ


Սովետական Միության և Սովետական Հայաստանի հակառակորդները, արտասահմանում, շարաշահում են կանանց և աղջկանց միամտությունը, լավ ես է տաել պըճ-

նասիրությունը, նրանց միջև պրոպագանդելով, որ սովետական կանայք և աղջիկներ գրկել են ուսկեղեն, արծաթեղեն և աղամանդեղեն զարդեր կրելու հաճույքից:

Արտասահմանի այն կինը, որը դյուրահավատությամբ հավատացել է այդ զրապատություններին, եթե անցներ միայն Աբովյան փողոցով ու տեսներ ոսկերչական արհեստանոցների ապակեթեղկերում ցուցադրված ու վաճառքի հանված ակնեղեն, արծաթեղեն և ադամանդեղեն զարդեղենների ձևխությունն ու արվեստի նրբությունը, ինչպես նաև երթևեկող կանանց և աղջկանց արդուզարդերի բարձր ճաշակը, լիահագագպիտի Ֆիծաղեր զրապարտիչների վրա:

տանդնուպոլսի և Տրապիզոնի ի հնումն համբավյալ ոսկերիչները:

Հայ ոսկերիչներն այժմ ավելի մեծ վարպետությամբ են կիրառում իրենց արվեստը Երևանում, հատուկ արհեստանոցներում, այն տարբերությամբ, որ մինչ Կոստանդնուպոլսի ոսկերիչների կիրառած մոտիվների վրա տիրապետում էին առավելապես «Հուգովիկոս 15-րդ»ի և «Հուգովիկոս 16-րդ»ի անունով ծանոթ ոճերը, Երևանի ոսկերիչներն ունեն յուրահատուկ հայկական ոճ, ոչ միայն Հին-



Մի տեսարան Բաղրամյան պողոտայից

Ես առիթ եմ ունեցել ժամերով կանգ առնելու Երևանի ոսկերչական արհեստանոցների ցուցափեղկերի առաջ և ի սրտե հիացել հայ ոսկերիչների պատրաստած ոսկեղենն ու արծաթեղեն բարձրաբիւստ առարկաների՝ ապարանջանների, օղերի, մանյակների, թեր ու կրծքի կոճակների, զարդասեղների, բրոշների, ծխատուփերի, ծխափողերի, հարսանեկան արկդիլների, շաբարամանների, սրճամանների, ափսեների, ծաղկամանների և թեյի գդալների վրա, ուրուց գեղեցկության պիտի նախանձեին Կոս-

հայկական ոճի նման, այլ նաև վերցրած արդի իրական կյանքի առօրյացից: Եվ արձանագրենք միանգամայն, որ Երևանի հանրածանաչ վանեցի ոսկերիչների միջև քիչ չէ արտասահմանից՝ Եղիպատուից, Սիրիայից ու Լիբանանից հայրենադարձ ոսկերիչների թիվը:

Կանանց ու աղջկանց արդուզարդերի շարքում, կարեռ տեղ է զրավում թեր ժամացուցը: Արդարև, առանց շափազանցության կարելի է ասել, որ ո՞չ մեկ երկրում ժամացուցի գործածությունն այնքան ընդհան-

րացած չէ եղել, որքան մեր երկրում: Աղջիկ ու տղա դպրոցականներն անգամ, իրենց դաստակերի վրա կրում են նրբաճաշակ ժամացույցներ, որոնց այսքան առատությունը խոսում փաստը չէ՝ միթե այն իրողության, որ սովորական մեր երկրի մարդիկ ավելի լավ են զնահատում ժամանակի հարգը, ավելի ճշտապահ են իրենց ժամագրություններում և ավելի գործուրությունը՝ իրենց աշխատանքների հանդեպ:

Հայաստանի կանանց և աղջկանց համեստությունն ու պարկեշտությունը շքեղորեն

արտացոլվում են նրանց արդուզարդերի ներդաշնակ շափավորության մեջ. այնպես, որ դուք չեք կարող այստեղ հանդիպել իգական սեփի մասնահատուկ արտառուց շպարումներին և հանուն նորաձեռության, այլանդակված ռեկոնկրետի թագուհիների սովորաւթյուններին: Այստեղ, Սովետական մեր Հայրենիքում, կա մի անուրանալի ճշմարտություն, այն՝ թե լուրաքանչուր քաղաքացու իրական աշխատանքի աշխատավարձի և հկամտի ամի ապահովման միջոցով բարձրանում է ամբողջ բնակչության կենսամակարդարությունը:

9. ԴԱՍՏԻԱՐԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ

Ամենաուրախագի իրողություններից է նաև այն, որ Սովետական իշխանության ժամանակ հնադարյան հայկական մշակությունը վերածնիւց և նոր զարգացում ստացավ 1943 թվականին Հայաստանում գրագետները կազմում էին միայն 15%, իսկ այժմ գրագետ է համարյա ամբողջ բնակչությունը:

Արդարեւ, չկա ո՞չ մի անկյուն, ո՞չ մի շենք, ո՞չ մի հիմնարկ, ուր բնակչության գրագիտությունը, գրական ճաշակը, գիտելիքները զարգացնելու նպաստող միջոցներ ապահովված չկանեն: Կմտնեք որևէ հիմնարկի գոնից ներս: Զեր ուշագրությունն առաջին հերթին իսկ կգրավվի այդ հիմնարկի հատուկ «պատի թերթուլ», որի բազմազան այժմեական ու հետաքրքրական բովանդակությունից ամեն օր օգտվում է աշխատավոր ընթերցողը:

Ասենք, թե կանգառում սպասում եք տրամվայի. այդտեղ դուք կատնեք յուղաներկ բարձրադիր մի ապակեփեղիկ, որի մեջ օրվա թերթերը իրենց են հրավիրում ընթերցասեր աշխատավորներին: Կանք կառնեք այդ ապակեփեղիկի առաջ և անհագ կարդաք միութենական և ռեսապուրիկական առօրյա կյանքի և համաշխարհային քաղաքական կյանքի վերաբերյալ լուրերը, գիտնականների, ընկերաքանների, գրականագետների կողմից ստորագրված դաստիարակիչ հոգվածները: Այսպիսով ո՞չ միայն չեք զգա սպասման ձանձրույթը, այլև մտավորապես լուսավորված մտնեք յու-

րաքանչյուր հինգ բոպեռում իրար հետևող տրամվայի վագոններից ներս:

Այստեղ, տրամվայում ևս, դուք ականատես կլինեք բնակչության հանդեպ Սովետական կառավարության հայրական հոգատարության, դաստիարակիչ գերին: Վագոնների պատերի վրա հայերենով դուք կկարդաք զանազան լոգունդներ:

Ինձ նման արտասահմանից գեռևս նոր սովետական երկիր ժամանած մարդկանց համար այս դաստիարակիչ լոգունդներն ունեն մեծ նշանակություն, որովհետեւ նրանք արտասահմանյան տրամվայների պատերի վրա տեսել են միմիայն ամերիկյան-հոլիվուրյան-կավալբոյական անքարոյացուցիչ կինոփիլմերի կամ ամերիկա-անգլիական կապիտալով կազմված ընկերությունների շահագործումը համերժացնող չոր ու ցամաք ռեկլամները: Նրանք, արտասահմանյան այդ երկրներում, տեսել են տրամվայի հետեւ դոնից իշնող, կամ վագոնի ընթացքի ժամանակ ներս մտնել ցանկացող անկարգ երեխաների ու տգեստ բանվորների անդամադրկելը, ուղեղի պայթելը տրամվայի երկաթգծերի վրա: Նրանք, արտասահմանյան այդ երկրների տրամվայներում, չեն տեսել այն հարգանքը, որն ընծալվում է սովետական երկրների տրամվայներում՝ երթևեկող ծերերին, երեխաներով մայլերին և հաշմանդամներին, մյուս ուղևորների կողմից:

(Շարունակելի)